

- 163 Որ բազմամեայ ժամանակօք
Բրնակ եղեալ էր անդ կամօք,
Հանդերձ այլովք արենակցօք,
Եւ տոհմային մերձաւորօք :
- 164 Ապայ յաւուրս աղոհացից,
Յետ լըսելոյս զ՞բան քարոզից,
Շատ բաբունեաց Արամենից,
Կարօտէի Սարգսի ստից
- 165 Ձի լըսէի համբաւ նորին,
Քաջաքարող գոլ ի բեմին,
Ճարտար մեկնիչ բանի փրկչին,
Խելամբտող պարզամիտին :
- 166 Ուստի ըստէպ ես երթայի
Յեկեղեցին Լուսաւորչի,
Ըն լսել անդ զ՞բան քարոզի,
Ձոր արտադրէր բերան Սարգսի :
- 167 Նովաւ գըտեալ իմ մըխիթար՝
Ծանօթացայ Սարգսի ճարտար,
Ընդ որ յաճախ ընտանեբար
Երթեւեկ լեալ՝ խօսէի յար :
- 168 Իսկ ի գարնան փրկչին ամի,
Հազար եւ եօթն հարիւրորդի
Վաթսուն եւ վեց եւս ըզկընի,
Աշակերտիլ այնմ ուխտէի :
- 169 Ի նոյն տարւոջ շարժն ահագին
Ըզտառս Սարգսի տպարանին
Ձնջեալ՝ խառնէր ընդ խիճ փլածին
Ի վէզիր խան կոչեալ տեղին :